ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև) գործուղման արդյունքների
մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Ժաննա Անդրեասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև), 2019 թվականի հոկտեմբերի 28-30-ը

4. **Հրավիրող կողմը.**
   «ՄԱԿ Կանայք» կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
   Պեկին+25 տարածաշրջանային վերանայման հանդիպման մասնակցություն, ելույթ և պլենար քննարկման վարում, հանդիպում «ՄԱԿ Կանայք» կազմակերպության փոխնախագահի հետ՝ ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի կոմիտեում ՀՀ համանախագահության շրջանակներում անելիքների քննարկման նպատակով:

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկված թեմաներն էին գենդերային հավասարության ապահովման հնարավորությունները հետևյալ հիմնական ուղղություններով՝ կանանց ներգրավվածություն որոշումների կայացման գործընթացում, սոցիալ-տնտեսական հզորացում, շրջակա միջավայրի պահպանություն, գենդերային հիմքով բռնության և խտրականության դեմ պայքար, աղքատության հաղթահարում: Բոլոր ոլորտներում ներկայացվում էին հիմնական խնդիրները, հաջող փորձը, առաջիկա անելիքների ուղղությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.** Կազմակերպվել են հանդիպումներ «ՄԱԿ Կանայք» կազմակերպության փոխնախագահի հետ, ինչպես նաև ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի կոմիտեի քաղաքացիական հասարակության թևի համակարգող ներկայացուցչի հետ, երկու ելույթ եմ ունեցել գենդերային բռնության դեմ պայքարի պլենար նիստում և գենդերային հավասարության սերունդի ֆորումին նախընթաց «ՄԱԿ Կանայք» կազմակերպության, Ֆրանսիայի և Մեքսիկայի կազմակերպությունների կողմից կազմակերպված քննարկմանը՝ ներկայացնելով ՀՀ հանձնառությունը՝ առաջ տանել օրակարգը երկրում և առաջնորդել տարածաշրջանում: Վարել եմ պլենար քննարկում կայուն զարգացման նպատակների և Պեկին+25-ի օրակարգերի համադրման հնարավորությունների մասին:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Այցի ֆորմատը փաստաթղթերի ստորագրում կամ որոշման ընդունում չէր նախատեսում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել «ՄԱԿ Կանայք» կազմակերպության հետ՝ շարունակելու քննարկումները ՀՀ կողմից հավասարության սերունդ հարթակի ներսում գործողությունների նախատեսվող վեց կոալիցիաներից որևէ մեկը առաջնորդելու համար՝ հիմք վերցնելով կանայք, խաղաղություն, անվտանգություն թեմայով, ինչպես նաև մոդելային դիտարկելով թավշյա հեղափոխությունից հետո կառավարություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության փորձառությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև տարածաշրջանային մեկ հանդիպում իրականացնել Հայաստանի Հանրապետությունում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Առաջարկվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ սերտ համագործակցությամբ ակտիվորեն աշխատել ՀՀ՝ հավասարության սերունդ հարթակում ընդգրկման ուղղությամբ, տարածաշրջանային քննարկումը ՀՀ-ում կազմակերպելու ուղղությամբ, ինչպես նաև նախապատրաստել 2020 թվականի մարտին Նյու Յորքում նախատեսվող համաժողովին ՀՀ կողմից քննարկումների կազմակերպումը՝ առնվազն երկու միջոցառման ձևով, ինչպես նաև երկրի տեսանելիության բարձրացմանն ուղղված այլ քայլեր ձեռնարկել՝ հաշվի առնելով

երկրի կողմից վերոնշյալ կոմիտեում համանախագահության հանգամանքը և դրա ընձեռած հնարավորությունները:
Առաջարկվում է նաև ՀՀ հրավիրել Ֆրանսիայի գենդերային հավասարության նախարարին՝ հաշվի առնելով առաջիկայում Ֆրանսիայի հովանու ներքո անցկացվելիք ֆորումը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

11/4/2019

X

ԱՐԱՄԻ ԺԱՆՆԱ

04.11.2019թ. Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169